ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» 2000 թվականի փետրվարի 11-ի Համաձայնագրին Հայաստանի Հանրապետության կառավարության միանալու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ մի կողմից, Ռուսաստանի Դաշնության կառավարությունը և Բելառուսի Հանրապետության կառավարությունը՝ մյուս կողմից, այսուհետև՝ Կողմեր,

ղեկավարվելով 1994 թվականի ապրիլի 15-ի՝ Արտադրական, առևտրային, ֆինանսավարկային, ապահովագրական և խառը անդրազգային միավորումների ստեղծմանն ու զարգացմանն աջակցելու մասին համաձայնագրով,

ձգտելով պահպանել ու զարգացնել «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի՝ Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության մասնակից կազմակերպությունների միջև ավանդաբար ձևավորված գիտատեխնիկական, արտադրական, առևտրային և ֆինանսական կապերը,

հաշվի առնելով արտադրական և ներդրումային ներուժի հետագա ինտեգրման ու առավել արդյունավետ օգտագործման կարևորությունը, ինչպես նաև Կողմերի պետությունների արդյունաբերական համալիրների կոոպերացիոն կապերի բարձր մակարդակը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Հայաստանի Հանրապետության կառավարությունը միանում է 2000 թվականի փետրվարի 11-ի՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» Համաձայնագրին և ամբողջ ծավալով ստանձնում է դրանից բխող իրավունքներն ու պարտավորությունները:

Հոդված 2

Կողմերը 2000 թվականի փետրվարի 11-ի՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» Համաձայնագրում կկատարեն անհրաժեշտ_փոփոխություններ և լրացումներ՝ կապված դրան Հայաստանի Հանրապետության միանալու հետ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրությամբ:

Հոդված 3

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին Կողմերի վերջին գրավոր ծանուցման օրվանից:

Կատարված է Մոսկվա քաղաքում 2016 թվականի նոյեմբերի 30-ին, երեք բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝	**Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից՝**	**Բելառուսի Հանրապետության կառավարության կողմից՝**